



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄ**

Հայաստանի Հանրապետություն, 0019 Երևան, Մ. Բաղրամյան 19, հեռ. (+374 11) 888-107, 888-146, էլ. հասցե՝ intrel@armsai.am

№ _____

« 27 » հունիսի 2019 թ.

ՀՀ հաշվեքննիչ պալատի
Նախագահին և անդամներին

Հատուկ կարծիք

Սույն թվականի հունիսի 28-ի ՀՀ ՀՊ արտահերթ նիստի օրակարգի 6-րդ կետի «ՀՀ հաշվեքննիչ պալատի 2018թ.-ի մայիսի 10-ի թիվ 2/1 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ հաշվեքննիչ պալատի որոշման նախագծի (էլեկտրոնային եղանակով ստացված՝ 25.06.2019թ.) բովանդակության վերաբերյալ հայտնում եմ, որ ուսումնասիրելով տվյալ որոշման հիմքում դրվող ՀՀ ՀՊ անդամ Գ. Ոսկանյանի ՀՊՄ/Ն-30 և ՀՀ ՀՊ անդամ Ա. Գևորգյանի ՀՊՄ/Ն-31 առ 11.06.2019թ.-ի գրությունների բովանդակությունը, չեմ եկել այն եզրակացության, որ անհրաժեշտ է ՀՀ ՀՊ իրավաբանական վարչությունը վերակազմակերպել բաժնի: Նշված գրություններում բերված կարծիքները ու համապատասխան առաջարկությունները առարկայական հիմնավորման և պարզաբանման կարիք ունեն: Հիմք ընդունելով ՀՀ ՀՊ բնականոն գործունեության համար անհրաժեշտ իրավական ապահովման գործոնների բազմազանությունն ու անընդհատության պահանջը և համադրելով հաշվեքննության գործընթացին առնչվող գործառույթ իրականացնող ՀՀ ՀՊ մասնագիտական կառուցվածքային, ինչպես նաև աջակցող այլ ստորաբաժանումների վարչակազմակերպական

ՀՊՄՆ № ԻՊՄ/Ն - 98
 « 27 » / 06 20 19թ.
 ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

կառուցվածքի տեսակը ստորաբաժանումից պահանջվող կատարման ենթակա գործառույթների հետ, ակնհայտ է դառնում, որ ՀՀ ՀՊ իրավաբանական ստորաբաժանման վարչակազմակերպական կառուցվածքի տեսակը առնվազն պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից, հայցում եմ՝ “Հաշվեքննիչ պալատի մասին” ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների համաձայն, կցել սույն հատուկ կարծիքը քննարկվող հարցի մասին համապատասխան որոշմանը:

Շնորհակալ եմ համագործակցության համար:



Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ